


ՊԱՇՏՈՆԱԿԱՆՔ



ՎԵՆԱՓԱՌ-ՆԱՅՐԱՊԵՏԻ ՌԻԽՏԱԳՆԱՅՈՒԹՅՈՒՆԸ ԴԵՐ ԶՈՐ

Նայաստանում քրիստոնեության պետական կրոն հռչակելու 1700-ամյակի Կոնստանդնուպոլսի միջոցառումների շարքում առանձնահատուկ տեղ ու նշանակություն ունի Ամենայն Նայոց Կաթողիկոս, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Երկրորդի ուխտագնացությունը Դեր Զոր: Նախնական պայմանավորվածության համաձայն, ուխտագնացությանը մասնակցելու էր նաև Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսը: Նպատակն այն էր, որ երկու Կաթողիկոսները միասնաբար գնան Դեր Զոր՝ իրենց հարգանքի փութքն ընծայելու մեկուկես միլիոն նահապետների հիշատակին:

Ամենայն Նայոց Կաթողիկոսի գլխավորած ուխտավորների պատվիրակությունը, որի կազմի մեջ էին մտնում հոգևոր, պետական, մշակութային, գիտության, կրթության բնագավառների անվանի գործիչներ՝ թվով 40 մարդ, Նախա ժամանեց 2001 թ. ապրիլի 23-ին, փեղական ժամանակով ժամը 10.00-ին: Նախա օդանավակայանի պարփո սրահի մեջ Վեհափառ Նայրապետին դիմավորեցին Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոս Արամ Ա-ն, Բերիո թեմի առաջնորդ, Գերաշնորհ Տ. Մուրեն արքեպս. Գաթարոյանը, բարձրաստիճան հոգևորականներ, ազգային իշխանության, հայկապահայ կրթական, մշակութային, բարեգործական, հայրենակցական միությունների, ինչպես նաև քույր Եկեղեցիների ներկայացուցիչներ: Այնուհետև թափուրը շարժվեց դեպի Նախա:

Նախաը Միրիայի նշանավոր քաղաքներից է, երկրի հյուսիսային մայրաքաղաքը՝ Կոնստանդնուպոլսի, մշակութային, կրթական, մարզական, կրոնական նշանավոր կենտրոնը: Ունի մեկ միլիոնից քիչ ավելի բնակչություն: Նախաի բնակչության 82%-ը սուննի մահմեդականներ են, բնակչության 11%-ը քրիստոնյա է: Այստեղ գործում են 460 մզկիթ և շուրջ 40 եկեղեցիներ: Նայկական համայնքը Նախաի քրիստոնյա բնակչության ամենանշանավոր հանրությունն է: Նախաում բնակվում է շուրջ 51.000, իսկ ամբողջ նահանգում՝ 68.000 Նայ Առաքելական Եկեղեցու հետևորդներ, հայ կաթողիկե համայնքի մոտավոր քանակը շուրջ 23 հազար է, որի 60%-ը հայերեն չի խոսում, իսկ հայ ավերարանական համայնքը հաշվվում է մոտ չորս հազար հոգի: Նա-

լեայում գործում են Հայ Առաքելական վեց, կաթողիկե՝ յոթ, և ավերարանական՝ հինգ եկեղեցի (ընդամենը՝ 18 եկեղեցի): Հայեալի հնագույն հայկական եկեղեցին Ս. Մարիամ Աստվածածին եկեղեցին է, որը 1429 թ. կառույց է (այժմ որպես եկեղեցի չի գործում): Բացի այդ, Հայեալի նահանգի փարբեր բնակավայրերում (Կամիշլի, Հասակե, Թ-Է Աբդա, Ռակկա, Յակուբիե, Քեսաբ, Արամո և այլուր) գործում են Հայ Առաքելական 17 եկեղեցիներ ևս: Հայեալի առաջնորդանիստ եկեղեցին Ս. Քառասնից մանկանց եկեղեցին է, որը գրկվում է Մալիպե (Խաչ) թաղամասում: Սույն շրջանը դարեր ի վեր եղել է քաղաքի քրիստոնեական համայնքների աղոթավայրերի, եկեղեցիների, մարտունների, հարակից կրոնական կառույցների և բնակարանների մի համալիր: Հայոց Մայր եկեղեցին 1476 թվականի կառույց է, վերանորոգվել է 1499-1501 թվականներին, դարերի ընթացքում ևս մի քանի անգամ վերակառուցվել է ու ընդարձակվել: Հարկանշական է, որ 1651 թվականի նոյեմբերի 30-ին այստեղ է փրկի ունեցել Ամենայն Հայոց Փիլիպպոս Ա Աղբակեցի (1632-1655) և Մեծի Տանն Կիլիկիո Ներսես Ա Սեբաստացի (1648-1654) Կաթողիկոսների պատմական հանդիպումը, որից հետո Կաթողիկոսները, ինչպես գրում է Առաքել Պարմագիրը, միասին ուխտի են գնացել «ի սուրբ քաղաքն Երուսաղէմ»: Եվ ահա, ուղիղ 350 փարի անց, Հայեալի Ս. Քառասնից մանկանց եկեղեցին դառնում է Հայոց զույգ Հայրապետների նոր հանդիպավայր: 350 փարվա մեջ առաջին անգամ է, որ Ամենայն Հայոց Կաթողիկոսը ժամանում է Հայեալ, ժամանում է դարձյալ որպես Ուխտավոր, սակայն ոչ թե Երուսաղեմի, այլ Դեր Ջորի Ուխտավոր:

Բազմաձևազար հայեպահայեր, փարբեր երկրներից ժամանած խումներս ուխտավորներ Մեծ Ուխտավորին դիմավորեցին «Նափի Հայեալ»՝ Ազիզի պողոտայի սկզբնամասում: Այստեղից թափորը, Վեհափառների գլխավորությամբ, հեքիտուն շարժվեց դեպի Ս. Քառասնից մանկանց եկեղեցի: Հայկական թաղամասում թափորն ընթանում է փողային նվագախմբերի շեփորների, դարաց դասի շարականների և խանդավառ բնակչության ցնծալից ծափողջույնների ուղեկցությամբ: Ծնեքերի փանիքներից, բաց լուսամուտներից ու պարզգամբներից անընդհատ ծաղկաթերթիկներ և քաղցրավենիքներ էին թափվում, հաճախ խաչմերուկներում գառներ էին մորթում՝ մարտադացու գառներ: Վերջապես թափորը հասավ Մայր եկեղեցի, որն արդեն լեի-լեցուն էր հավարացյալներով:

Փողային նվագախումբը կատարում է Հայաստանի Հանրապետության և Սիրիայի Արաբական Հանրապետության պետական հիմները, դպրոցահասակ երեխաները ճերմակ աղավկիներ են բաց թողնում երկինքն ի վեր:

Առաջնորդ Սուրեն արքեպս. Գաթարոյանը բարի գալուստ մաղթելով զույգ Հայրապետներին՝ հավաստեց, թե «Վեհափառները պիտի աղոթեն այս փան մեջ, հատկապես պիտի աղոթեն, որ Ազար, Անկախ Հայաստանը հեռու մնա փորձանքներից և միշտ ծաղկի և ծաղկեցնի ողջ հայ ժողովրդին»: Այնուհետև Հայոց Հայրապետին ողջունեց և բարի գալուստ մաղթեց Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոս Արամ Ա-ն: Արամ Ա Վեհափառն իր ուրախությունը հայրենց այս հանդիպման առթիվ և հա-

վաարեց, թե զույգ Կաթողիկոսների ուխտագնացությունը «պարզամ ունեցող պահ է, որ մեր պարամութեան շրջագծէն անդին՝ դեպի հավիտենականութիւն կ'երթայ ու մեր միասնականութիւնը կը շեշտէ: Մենք միասին պիտի քալենք, միասին պիտի մտածենք, միասին պիտի գործենք ու ծառայենք մեր ազգին ու Նայրենիքին՝ պայծառութեան ի խնդիր»:

Ամենայն Նայոց Կաթողիկոս, Ն.Ս.Ս.Տ. Գարեգին Երկրորդը խոսք առնելով՝ ողջունեց հավաքացյալ ժողովրդին: Վեհապատն իր խոսքի ամբողջ ընթացքում այդպէս էլ չկարողացավ թաքցնել հուզմունքը:

«Միրելի՛ բարեպաշտ գավակներ Առաքելական Մայր Եկեղեցւո. գոհություն և փառք առ Աստված, որ Նայրապետիս քայլերն ուղղեց դեպի Նալեպ, դեպի Դեր Զոր՝ Նայոց դարձի 1700-ամյակի առթիվ մեր եկեղեցականաց և բարեպաշտ ժողովրդի ուխտը կարարելու: Ուխտ կարարելու Աստծո և սուրբ նահապետների առջև: Այս պահին Նայրապետիս հոգին հուզմունք է ապրում այն ջերմ և խանդավառ ընդունելությունից, որով մեզ բարի գալուստ մաղթեցիք պարմական Նալեպ քաղաքում: Անցնում էի հալեպահայերի միջով, տեսնում էի ձեր ժպիտները, տեսնում ձեր հայացքների մեջ ուրախությունը, նաև կարոտը, որ մեր միջոցով գնում էր դեպի Նայոց աշխարհ: Նավանաբար ձեզանից շարերը մեր պարտվիրակության անդամների աչքերի մեջ տեսնում էին նույնատիպ կարոտ՝ կարոտ առ ձեզ, քանզի մենք հարկադրոված ենք եղել բաժանվելու և ապրելու մեկուսի: Մակայն այդ կարոտը վերածվում էր հպարտության զգացումի, որովհետև մեր ժողովրդի եղեռնից մազապուրծ գավակները, շնորհիվ բարյացակամ, մարդասեր վերաբերմունքի, շնորհիվ Սուրիո վեհանձն իշխանությունների և այս բարեկամ ժողովրդի, կարողացել են իրենց մեջքը շրկել և ազնիվ աշխատանքով կերպել իրենց նոր կյանքը՝ Սուրիո առաքինի աշխատավորության հետ դառնալով այս երկրի արժանավոր, պարկեշտ քաղաքացիներ: Քայլում էի և մտածում ինչպէ՛ն կարող եմ սփոփել ձեր հոգու կարոտը, ի՛նչ կարող եմ փոխանցել, որով դուք կարողանաք ոգի առնել ու նոր հավաքով ու հույսով նայել դեպի մեր կյանքի բացվող նոր հազարամյակը:

Ոչինչ չունեմ, բացի օրհնություններ Ս. Էջմիածնից, որ կարոտով սպասում է իր գավակներին:

Միրելիներ. գալով Ազատ ու Անկախ Նայրենիքից, որպէս ազգիս Նայրապետ, բերել եմ ձեզ մեր ողջույնները հայրենաբնակ ժողովրդից, ողջույններ Ծիծեռնակաբերդից, որը, որպէս մի նոր վկայություն մեր հավերժական լինելության, վեր է հանել Նայոց հողի վրա: Բերել եմ ձեզ ողջույններ Սարդարապատի զանգերից, որ իրենց դողանջով մշտապէս արթուն են պահում Դեր Զորում ընկածներին, մահին՝ մահով հաղթելու: Մենք բերել ենք ողջույններ ձեզ Նայոց հաղթական բանակից, որ իր սրի ծայրով այսօր արձանագրում է ու գրում մեր վերածնված Նայրենիքի պարմության նոր էջը՝ ապահովություն փոխանցելով ինչպէս Նայրենիքի գավակներին, այնպէս էլ ի սփյուռս ապրող ժողովրդին, որի հոգին ալեկոծվում է, երբ Նայրենիքում ինչ-որ անհանգստության նշաններ են երևում: Եկել ենք այստեղ մեր նահապետների առջև

մեր ուխտը վերանորոգելու: Եկել ենք, որպես Հայրապետ, մեր ժողովրդի գավակներին առաջնորդելու հայրենասիրության և եկեղեցասիրության մայրուղիներով, որպեսզի մեր Հայոց երկիրը միշտ լինի:

Այս պատմական առիթով մենք հոգու պարտք ունենք՝ երախտիքի խոսք ասելու հանուն արաբ ժողովրդի, հանուն այս օրհնյալ երկրի, հանուն նրա երկրասարդ ու կորովի առաջնորդի՝ փիար Բաշշար էլ Ասադի: Մեր ժողովուրդների բարեկամությունը երկար ու ձիգ փարհների փորձ ու պատմություն ունի: Արաբ եղբայր ժողովուրդների հետ հարաբերություններն այսօր նոր հնչեղություն և նոր որակ են ստացել, նոր ընթացք են որդեգրել: Ի գնահատումն ու նշանավորումն երկու ժողովուրդների ու պետությունների բարեկամական հարաբերությունների, մեր ժողովրդի գավակները Հայոց հողի վրա բարձրացնում են արաբ ժողովրդին նվիրված հուշարձան:

Այս բարեպապեհ առիթով ուզում ենք նաև մեր շնորհակալական խոսքն ուղղել թուր Եկեղեցիների ներկայացուցիչներին, որոնք եկան ողջունելու մեր մուսլիմ Սիրիայի հողի վրա: Մենք կարող ենք վստահություն ունենալ ապագայի նկատմամբ, քանզի Քրիստոսի Ավետարանի պարգամներն իրականություն են դառնում:

Մայր Աթոռ Ս. Էջմիածնից մենք բերել ենք Լուսավորչի Կանթեղի լույսը, որ 1700-ամյակի փոնակապարտությունների սկիզբն ազդարարելիս դուրս բերեցինք Խոր Վիրապից և վառեցինք Իջման Մեղանի կանթեղը և հետո փոխանցեցինք Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսությանը: Սիրով ուզում ենք Լուսավորչի Կանթեղի լույսը փոխանցել Բերիո թեմի առաջնորդ, սիրելի Մուրեն Սրբազանին, որ այդ լույսով վառվի Ս. Քառասնից մանկանց եկեղեցու կանթեղը, որպեսզի այդ լույսով ջերմանան մեր հոգիները, որ այդ լույսը լուսավորի մեր ազգի ընթացքը ինչպես Հայրենիքում, այնպես էլ Արցախում և Սփյուռքում: Փառք և գոհություն ենք հայրնում, որ Մենք արժանի եղանք մեր սիրեցյալ եղբոր՝ Մեծի Տանն Կիլիկիո Արամ Ա Կաթողիկոսի հետ ուխտի գնալու Դեր Ջոր: Ուխտ, որը դառնալու է սիրո և համագործակցության երաշխիք:

Թող Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու փառքը ուղեկից լինի մեր ժողովրդի գավակներին այժմ և միշտ, հավիտյանս հավիտենից, ամեն»:

Ողջույնի և օրհնանքի խոսքերից հետո փեղի ունեցավ կանոնական աղոթք, իսկ այնուհետև՝ աջահամբույր: Նազարավոր հավաքացյալներ, որ չէին փեղավորվել եկեղեցում, այժմ մտքենում էին Վեհափառ Հայրապետներին՝ նրանց օրհնությունները ստանալու համար:

Կեսօրից հետո, ժամը 16.00-ին, ուխտավորների կարավանը, զույգ Հայրապետների գլխավորությամբ, մեկնեց Դեր Ջոր: 350 կիլոմետր երկարությամբ ճանապարհը նախ ձգվում էր խնամքով մշակված այգիների, բանջարանոցների ու արպերի կողքով, ամենուր ջուր էր, ծառ ու կանաչություն: Փոքրիկ գյուղերն ու քաղաքներն իրենց գորշ, փափակ երդիկներով միապաղաղ սահում-անցնում էին ճանապարհի երկու կողմերով: Որքան մտքենում էր Դեր Ջորը, այնքան փոխվում էր բուսածածկույթը, անձայրածիր, անջուր, հրաշխի փափարակները հաջորդում էին միմյանց:

ՄԱՆՈՒԿԱԿՈՒՄԻՆԻՍՏԻ ԿՆՆՈՒՄԻՆԻՍՏ



86 փարի առաջ բոցագույն այս հարթավայրերը կլանեցին մեր ժողովրդի հազարավոր զավակներին: Կարավանը մոտենում էր հայ գաղթականության գլխավոր կենտրոնաբերդիներից մեկին՝ Դեր Զորին (ավելի ճիշտ՝ Դեյր-Էզ-Ջոր, բառացի թարգմանությամբ՝ անփառի վանք: Իր անունն ստացել է Եփրատի այս շրջանում եղած ամենամեծ անփառապար կղզուց):

1915 թվականի վերջերին և 1916 թվականի սկզբներին ընդամենը մի քանի ամսվա ընթացքում այստեղ, ինչպես նաև ոչ հեռու գտնվող Մարաթի և Սուվարի անապարներում ոչնչացվեցին ավելի քան 200 հազար հայ գաղթականներ: Քչերը փրկվեցին: Շնորհիվ արաբ բարի ժողովրդի՝ սպանոցից ազատվեց մի քանի հազար հոգի ու ապաստան գտավ շրջակա բնակավայրերում: Ժամանակի ընթացքում նրանց մեծ մասը դարձավ արաբախոս, սակայն պահեց իր ազգային հիշողությունն ու դիմագիծը:

Այժմ Դեր Զորը փոքրամասն կարևոր նշանակություն ունեցող, շուրջ 250 հազար բնակչությամբ քաղաք է: Հայերի թիվը կազմում է ընդամենը 100 հոգի: Եղեռնից վերապրող հայության խյսակները 20-ական թվականների վերջերին սրբազան պարտք համարեցին մահասփյուռ անապարի մեջ ցանուցիր, մեր անթաղ զոհերի աճյունները գեթ մասամբ ամփոփել հավաքական գմբեթի ներքո: Այսպես Դեր Զորում կառուցվեց Ս. Նոյսիսիմե մատուռը, մի պարզ ու համեստ շինվածք, որն արդեն 80-ական թվականներին գրկում էր փվվելու վրանցի առջև: Մեծի Տանն Կիլիկիո երջանկահիշտարակ Կաթողիկոս Գարեգին Երկրորդի (հետագայում Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Ա) նախաձեռնությամբ հին մատուռի տեղում 1990 թվականին սկսեց կառուցվել Մեծ եղեռնի հուշահամալիրը և Ս. Նահապետից եկեղեցին՝ որպես հիշտարակ մեկուկես միլիոն հայ նահապետների և խորհրդանիշ բարեկամության և երախտագիտության առ արաբ ազնիվ ժողովուրդը: Սույն եկեղեցին ճարտարապետական հիանալի կերտվածքով, դեղնավուն քարով ու մարմարով, գեղարվեստական բարձր ճաշակով կառույց է: Փողոցից եկեղեցին չի երևում, բարձր հասարակապարհային կարծես այն թաքցնում են պարզ ու պարսպ հետաքրքրասերների աչքերից: Աստիճանները փակում են բակ, որի կենտրոնում սլացիկ գմբեթով եկեղեցին է: Խորանաձև մի կառույցի մեջ, անմար կրակի դիմաց, կանգնեցված է Հայաստանից բերված մի գեղաքանդակ, հսկայական խաչքար: Մի քիչ այն կողմ արաբ նահապետներին նվիրված քանդակաշարն է: Եկեղեցին փոքր է, գողտրիկ ու ինքնավարիկ: Ճիշտ կենտրոնում նահապետների աճյուններով ապակեծածկ ցուցափեղկերն են, որոնց միջից վեր է խոյանում գեղակերպ, խաչավարպ, ցորենագույն մարմարյա մի սյուն: Սև մարմարյա պարտեզից մեկը պարկերում է անապարի ավազի վրա իր զավակին հայոց այբուբենը սովորեցնող մոր քանդակը, իսկ մյուս պարտի վրա փարագրության ուղիներն ու ջարդերի հիմնական կենտրոնաբերդիները ներկայացնող մի քարտեզ է գեղեղված: Պարտեզի փակ շարված գրափեղկերում Հայկական հարցին և ցեղասպանությանը նվիրված հրատարակություններ են, վավերագրեր, լուսանկարներ:

Օծման պահից ի վեր Ս. Նահապակյաց եկեղեցին արդեն դարձավ ուխտատեղի: Ամեն փարի այստեղ են գալիս եղեռնը վերապրողների ժառանգները, գալիս են խմբերով՝ անհապական նախաձեռնությամբ:

Շինությունն ավարտվել է 1991 թվականին: Նույն թվականի մայիսի 5-ին Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոս Գարեգին Երկրորդը կապարել է եկեղեցու օծումը: 2000 թ. ապրիլի 24-ին, Հայոց ցեղասպանության 85-ամյակի առթիվ, Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոս Արամ Ա-ն, նահապակների աճյունները պարփակող ավազների վրա կանգնած, Դեր Զորը հռչակեց Համազգային ուխտատեղի: Այդ կապակցությամբ Վեհափառը կոչ ուղղեց «մեր ժողովրդի բոլոր գառակներին, հեռաոր, թե մոտաոր, մեծ, թե փոքր, իրենց կեանքին մեշ գեթ մեկ անգամ մը ուխտագնացութեան գալու Դեր Զոր, հաղորդուելու եւ վերանորոգուելու մեր նահապակներու անմեռ ոգիով ու նուիրական կրակով»:

Եվ ահա Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Երկրորդը, իբրև մի պարզ ուխտավոր, այցելել է Դեր Զոր՝ իր հարգանքի փուրքը մատուցելու ազգի անմեղ զոհերի հիշարակին, եկել է՝ իր աղոթքը մրմնջալու նրանց հոգիների հանգստության համար, եկել է՝ հաղորդակցվելու նրանց հոգիների հետ, եկել է՝ Ս. Էջմիածնից բյուր օրհնություն բերելու և խունկ ծխելու:

Ապրիլի 23-ին, երեկոյան ժամը 21.00-ին, ուխտավորների կարավանը հասավ Դեր Զոր: Նուշահամալիրի նահապակյաց մատուռում Ամենայն Հայոց Կաթողիկոսի գլխավորությամբ կատարվեց հսկումի արարողություն:

Ապրիլի 24-ի վաղ առավոտյան ուխտավորները, Վեհափառ Հայրապետների առաջնորդությամբ, մեկնեցին Մարկապտե՝ Դեր Զորի անապատի-այն շրջանը, որտեղ 1915 թ. վերջերին և 1916 թ. սկզբներին ոչնչացվեցին մեր ժողովրդի փասնյակ հազարավոր գավակներ: Մինչև այսօր էլ Մարկապտեի հողը պահել է նահապակների անթաղ աճյունները, և անգամ պարահական հողային աշխատանքներն ի ցույց են հանում մարդկային անհամար ոսկորներ:

Ջարդերի այս կենտրոնափոխումը 1996 թվականին կառուցված Ս. Հարություն հրաշակներ մատուռում և շրջակայքում ապրիլի 24-ի վաղ առավոտյան հավաքվել էին Սիրիայի փարբեր վայրերից՝ Դամասկոսից, Ջեսարից, Կամիշլիից, Հալեպից, ինչպես նաև Լիբանանից և այլ երկրներից ժամանած հազարավոր ուխտավորներ: Կատարվեց հոգեհանգստի արարողություն: Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոս Արամ Ա-ն, իր պարգամը փալով ժողովրդին, շեշտեց. «Սիրելի՛ ժողովուրդ. իրաքանչիւրը կը գգա, որ մեր կեանքի այս պահը մեծ խորհուրդ ու պարգամ ունեցող պահ մըն է: Ինչպէս կը փեսնէք, Ամենայն Հայոց Կաթողիկոս, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Երկրորդի հեպ միասին, որպէս երկու Կաթողիկոսներ, եկած ենք ուխտի մեր նահապակներու մոտ: Եկած ենք ամրապնդելու մեր կամքը, ամրապնդելու մեր ազգի միասնութիւնը: Մեր ազգի նկարն է այժմ այստեղ՝ Հայրենիքէն եւ Սփյուռքի զանազան անկիւններէն»: Վեհափառն իր խոսքն ավարտեց հետևյալ շեշտադրությամբ, որ Դեր Զորը միայն գերեզման չէ, այլ մեր ժողովրդի հաղթության գրավականը:

«Դեր Զորին մեջ թեև մեր նախնիները ջարդուեցան, բայց չմեռան, որովհետև իրենց նահապարկութեամբ կեանք փութեցին մեզ, իսկ իրենք զարդարուեցան անմահութեան պսակով»:

Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Երկրորդն իր պարզամը փառով ժողովրդին կոչ արեց բարձր պահել հանուն հավաքի և հանուն հայրենյաց նահապարկված մեր անհամար գոհերի կրակը: Վեհափառ Հայրապետը մասնավորապես շեշտեց. «Ապրիլի 24-ը հիշարակի օր է, նահապարկաց հարգանքի մատուցման օր: Այսօր բազահազար հայորդիք Մայր Հայաստանում խումբ առ խումբ հաղթական բարձրանում են Ծիծեռնակաբերդի բարձունք՝ իրենց ուխտը կատարելու եղեռնի՝ մեր սուրբ նահապարկների առջև: Այսօր Մենք, որպես Հայրապետ Հայոց, 1700-ամյակի առթիվ գլուխ անցած Մայր Հայրենիքից այսօրեղ ներկա մտավորական հայորդյաց, մեր Եկեղեցու սպասավորների հետ, մեր Եկեղեցու զավակների հետ, մեր եղբոր՝ Արամ Առաջին Հայրապետի և իր ուխտյալ միաբանության հետ և ձեզ հետ, սիրելի՛ սիրիահայեր, եկել ենք այսօրեղ՝ ձերաղբելու նահապարկաց առջև և մեր ուխտը վերանորոգելու, այն ուխտը, որ մեր Տիրոջից՝ Հիսուս Քրիստոսից փրվեց պարզամ, և մեր ժողովրդի զավակները լայնորեն իրենց հոգին բաց արեցին այդ պարզամի առջև՝ «Միրեցեք միմյանց»: Այս պարզամն էր, որ ուղեկից եղավ մեր ազգի զավակաց: Այսօր կանգնած նահապարկաց այս հուշակոթողի առջև, նրանց լույս հիշարակի առջև՝ մեր հոգում բարձրանում է մտածումը՝ բանաստեղծական փողը հայ մեծ բանաստեղծի՝ «Ո՛վ հայ ժողովուրդ, քո ուժը քո հավաքականության մեջ է»: Մենք, սիրելիներ, որպես Եկեղեցի, որպես հոգևոր առաջնորդ, որպես առաջին սպասավորը Առաքելական մեր Մայր Եկեղեցու, Մեր շուրթերի վրա պիտի կրենք այդ երկու պարզամները՝ սիրով միաբան լինելու, միասիրտ, միակամ լինելու, որպեսզի մեր ազգային կյանքից ներս երբեք այլևս փեղ չգտնեն «Դեր Զոր», «ջարդ», «կտորած» բառերը: Այլ միշտ մենք կարողանանք հաղթանակից հաղթանակ քայլել, որպեսզի մեր կյանքում երբեք չլինի Սումգայիթ և Եռաբլուր, ուր հանգչում են մեր նորօրյա նահապարկները՝ քաջ ու արի: Նահապարկներ, որոնց արյամբ երաշխավորված է մեր հավիտենական ընթացքը դեպի նոր հազարամյակներ: Մենք աղոթք ենք բարձրացնում առ Աստված մեր սուրբ նահապարկաց առջև, որ Տերն անսասան պահի ազգս Հայոց, երկիրս Հայաստան, որ մենք կարողանանք սիրով շղարշված մեր հոգիներով կերպել երազի այն Հայրենիքը, հանուն որի նահապարկվեցին, մարտիրոսացան մեր ժողովրդի զավակները: Նրանց հիշարակին բերում ենք հավերժական Մասյաց կարոփի հայացքը և օրհնությունը Մայր Աթոռ Ս. Էջմիածնից:

«Յիշարակն արդարոց օրհնութեամբ ելիցի. ամեն»:

Արարողությունից հետո ուխտավորները կրկին վերադարձան Դեր Զոր՝ Ս. Նահապարկաց եկեղեցի: Այսօրեղ Ամենայն Հայոց Կաթողիկոսը մատուցեց Ամնահ և Սուրբ Պարարագ: Երգեցողությունը կատարում էր Հալեպի «Մուսավորիչ» երգչախումբը: Պարարագի ավարտից հետո Եղեռնի հուշակոթողի և անմար կրակի առջև փեղի ունեցավ հոգեհանգստյան արարողություն: Սուրեն արքեպս. Գաթարոյանը

Կաթողիկոսներին հանձնեց հուշանվեր-սկիհներ, որպեսզի «Ս. Էջմիածնի եւ Անթիլիասի Մայր փաճարներուն մէջ միշտ ներկա ըլլայ Դեր Զորը՝ իբրեւ մեր ժողովրդի գոհագործումի նուիրական բաժակը»: Տարբեր երկրներից ժամանած շուրջ 15 հազար ուխտավորներ, որ հավաքվել էին եկեղեցում, շրջակայքում ու մոտակա փողոցներում, համակ ուշադրությամբ ունկնդրեցին Վեհափառ Հայրապետի պարգամը:

Հայոց Մեծ եղեռնի 86-րդ փարելիցի առիթով 2001 թ. ապրիլի 24-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Երկրորդ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ասաց.

«Որ զանձինս իրեանց քեզ, Հայր, ընծայեցին եւ Որդոյ քում Քրիստոսի եղեն խաչակիցք»:

Միրելիներ. այսօր եկանք՝ մեր հոգու հայացքի առջև Արևմտյան Հայաստանի օրինյալ հողը՝ Սուրբ Մասյաց փեշերին այրվող այգեստաններ, խողխողված մանուկ ու ծեր, դեպի անապատ քշվող անզեն ու փանջահար ժողովուրդ: Անցանք այն ափերով Եփրատի, որի ջրերը կյանք բաշխելու փոխարեն Հայոց լեռնաշխարհից դիակ ու արյուն էին բերում 86 փարիներ առաջ և սարսափ էին գուժում ու մահ: Արագընթաց մեքենաներով կտրեցինք անեզր փափաստանը, որը, դու՛ք՝ բյուր նահապակներ հայոց, չափեցիք քայլ-քայլ և խաչը ուսած՝ անցաք Գողգոթայի ճանապարհով:

Եկել ենք, որպես շնորհընկալ Ամենայն Հայոց Հայրապետ, առաջին անգամ, հանուն մեր նախորդների, այսօր խորին խոնարհումով ծնրադրելու և Մայր Հայրենիքի ու Սուրբ Էջմիածնի օրհնությունը բաշխելու շիկագույն այս հողին, որը, ժամանակին անջուր ու անմարդաբնակ, հավաքական ձեր գերեզմանը դարձավ ու սրբագործվեց մարտիրոսյալ ձեր արյամբ՝ նվիրական դառնալով համայն հայոց համար:

Անապատի փոթակեզ քամին ավագով ծածկեց անթաղ մնացած ձեր աճյունները: Բայց մի՛թե Բարձրյալի աչքից կարելի է թաքցնել մարդկային չարիքը, մարդկային ամոթը: Մի՛թե ոճրապարտ մրքով ու ձեռքով գործվածը, որ սրտուց ու բնավեր արեց սրելծարար հնագույն մի ժողովրդի, կարող է մոռացության շղարշով պատվել ու ջնջվել սերունդների հիշողությունից:

Եկել ենք հանուն համայն հայ ժողովրդի, որը աշխարհի բոլոր ծագերում այսօր՝ ապրիլի 24-ին, համախումբ ու միասնական ոգեկոչում է նահապակներիդ սուրբ հիշատակը: Այսօր բազմահազար հայորդիներ, Հայաստանի Հանրապետության նախագահի գլխավորությամբ, Ծիծեռնակաբերդի բարձունքում խոնարհվում են ձեր հիշատակը հավերժացնող հուշակոթողի առջև:

Եկել ենք ուղեկցությամբ աշխարհասփյուռ մեր զավակաց, ովքեր՝ շառավիղները նախճիրից փրկվածների, աշխարհի չորս կողմերում հայ կյանքը վերահաստատած, պարմական մեր Հայրենիքի արևելյան մի հարվածում Հայաստանի ազապ պետությունը վերականգնած այսօր նախանձախնդիր են Հայոց ցեղասպանության ճանաչման հարցում, որպեսզի ոչ մի ժողովուրդ չհաղթի երբեք սեփական պարկանելության համար կոտորածի ողբերգությունն ու վիրավորանքը և չկառուցի Դեր Զոր, Ծիծեռ-



Ս. ՊԱՏԱՐԱԳ ԴԵՐ ՋՈՐԻ Ս. ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ԵԿԵՂԵՑՈՒՄ

նակաբերդ ու Եսայ Վաշեն, որպեսզի ոչ մի հողում չլինեն Մայրանեկ ու Բուխենվադ:

Սուրբ Էջմիածնի 1700-ամյա Միածնաէջ Լուսն Խորանի օրհնությունն ենք բերել նահապարակներիդ նշխարներին, Սուրբ Լուսավորչի Կանթեղի լույսը՝ մշտադառթք: Եկել ենք ուխտի, սրբազան երդման: Եկել ենք ձեր՝ Քրիստոսի խաչակիցներիդ հազարավոր անհայտ անունների հիշարակումով մեր ուխտը առ Աստված հաստատելու, համագգային մեր միասնականությունը նորոգելու և մեր հավաքը զորացնելու արդարության հաղթանակի հանդեպ: Եկել ենք ասելու ձեզ, որ ամեն ապրիլի 24-ի, նաև այսօր, հայ ընտանիքներում զավակներ են ծնվում հայորդիներ և հայուհիներ, որ Առաքելական Սուրբ Եկեղեցու ավագանում մկրտվում են ձեր անուններով:

Միրելի՛ ժողովուրդ հայոց ի սփյուռս աշխարհի. այս պահին մեր ուրբի փակ հողին խառնված, փշուր-փշուր ու մանրված ռսկորներն են հայ նահապարակների, սակայն մեր առջև նրանց հիշարակը հավերժացնող վեհաբն կոթող-եկեղեցին է՝ երկինք պարզած փրկագործ խաչով, որի թևերի հովանու ներքո խաղաղություն են գտել նշխարները մեր ազնիվ զոհերի:

Արդարև, սիրելիներ, բազմիցս խաչվելով չէ, որ խաչակից ենք Քրիստոսին, այլ որովհետև հարություն ենք առել, մահը կյանքով ենք ուրևակոխել և մեր Տիրոջ՝ Նիսուս Քրիստոսի օրինակով ամոթապարտ թողել մեզ խաչողներին: Մեր ժողովրդի փարագիր զավակները ստեղծարար իրենց կյանքը վերընծյուղեցին աշխարհի փարբեր երկրներում և քրիստոնյա հայի ազնիվ ու օրինավոր նկարագրով հարգանք ու վարահություն վաստակեցին ամենուր: Այդ նույն քրիստոնյա հայը՝ հաց ստեղծող, արհեստավոր, վաճառական, բժիշկ ու ճարտարապետ, Օսմանյան Թուրքիայում անցնող դարասկզբին մահվան դարապարտվեց, քանզի բնիկ ու փոսմիկ ժողովուրդն էր Արարաթի երկրի, քանզի դարերով վկայել ու վկայում էր իր հավատարմությունը Քրիստոսին ու Նրա սիրույն, որով մերժել էր չարը ու հաղթել մահեր:

Մեր նահապարակների սուրբ հիշարակի ոգեկոչման այս նվիրական օրը Մեր սիրեցյալ եղբայր Արամ Ա Կաթողիկոսի հետ Դեր Ջոր ուխտի եկած մեր զավակների, համայն մեր ժողովրդի անունից երախտագիտության Մեր խոսքն ենք ուղղում արաբ ժողովրդին և բոլոր ժողովուրդներին, որոնք արհավիրքի դժնդակ օրերին սաղարեցին աստանդական հայերին և մարդասիրության հազարավոր օրհնակներով դափապարտեցին հայկական կոտորածները, իսկ այսօր նույն նախանձախնդրությամբ ճանաչում են Նայոց ցեղասպանության իրողությունը:

Մեր գնահատանքն ու շնորհակալությունն ենք հայտնում մասնավորաբար Միրիայի պետությանը, որն ապաստան է տվել բազմաթիվ փարագիր հայերի, օգնել բուժելու հոգու վերքը և ընդունելով նրանց որպես իր լիարժեք քաղաքացիների, ի հարգանս հայ նահապարակների, աջակցել է նաև՝ կառուցելու Դեր Ջորի այս հուշահամալիրը: Նահապարակաց լուսաբնակ այս մարտան Սուրբ Խորանի առջև Մեր աղոթքն ենք բարձրացնում հանուն Միրիո մեծարգո նախագահ Բաշար Ասադի արևշարու-

թյան և նրա երջանկահիշարակ հոր ու նախորդի՝ Նաֆեզ Ասադի հոգու հանգստություն:

Ցեղասպանություն ապրած ժողովրդի Նայրապետիս աղոթքին այսօր երկնքից ձայնակից են բոլոր հոգիները հայ մարտիրոսների՝ հայցելով խաղաղություն համայն աշխարհին, նաև մարդկային քաղաքակրթության հնագույն օրրան այս փարածաշրջանում ապրող բոլոր ժողովուրդներին:

Ողորմիր, Ասրված, հոգիներին մեր սուրբ նահապակաների, որ «Որդւյ թում Քրիստոսի եղեն խաչակիցք» և «կանգնեցին մեզ յաղթող նշան ընդդէմ թշնամոյն»: Ջորաքրո՛ւ, Ասրված, ճշմարտասիրության ու արդարամտության հոգին ժողովուրդների, որպեսզի պետությունների կողմից Նայոց ցեղասպանության ճանաչումը նոր դարասկզբին արդարության ձայնի ազդարարը դառնա ու մտքեցնի նրան հաղթանակը: Այդ օրը, ո՛վ Տեր, թող մեզ շուր ծագի՝ հանուն չարիքի մերժման ամբողջ աշխարհում, հանուն մարդկության խաղաղ ու բարեգործ լուսավոր գալիքի:

Միերիներ, նվիրական ու պարմական այս պահին մեր գոհունակությունն ենք հայտնում մեր սիրեցյալ եղբորը՝ Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոս Արամ Ա-ին, նրա ուխտյալ միաբանությանը, որ մշտական կերպով իրենց աղոթքն են բարձրացնում առ Ասրված, վառ պահում նախնյաց հիշարակը: Մեր գնահատականն ենք բերում սուրիաբնակ մեր բարեպաշտ զավակներին, որոնք նախանձախնդիր պահապաններն են նահապակաց սրբավայրերի: Մենք այս առիթով մեզ հետ Նայրենիքից բերել ենք հող, որպեսզի Սուրեն Սրբազանն այդ հողը շաղ փա Դեր Ջորի աճյունների վրա, որ նահապակները հանգիստ հանգչեն հայրենի հողի ներքո: Բերել ենք նաև ջուր Ս. Էջմիածնից: Գիտենք, որ փասնյակ մղոններ անցած մեր նահապակները պապակ են, և հավաքացած ենք, որ Ս. Էջմիածնից բերված այդ ջուրը պիտի նրանց պապակը մարի: Մենք այս երկու օրը փեսանք և բարձրաձայն գնահատում ենք Սրբազան Նոր ծառայությունը նահապակաց այս վայրում: Եվ Մենք զարդարում ենք նրա կուրծքը նախկուսական պանակելով: Թող Ասրված առողջ կյանք և ծառայության բազում փարիներ պարզկի Սուրեն Սրբազանին: Նահապակաց մարտիկն բերել ենք մի խաչ, որից լույս պիտի ճառագի նահապակներին, և նրանք պիտի այսուհետև հանգիստ հանգչեն: Այս ուխտագնացության առիթով, որպես եղբայրական սիրտ վկայություն, միասնաբար աղոթեցինք Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոս Արամ Ա-ի հետ: Ցանկանում ենք, որպես հիշարակ, Արամ Վեհափառին նվիրել Ամենափրկիչ Ս. Ասրվածածնի նկարը՝ հայցելով Ասրվածամոր մշտական հովանավորությունը Նորին Սրբության, կիլիկյան միաբանների և նրա հավաքացյալ ժողովրդի վրա: Գնահատանքի Մեր վերջին խոսքը մեր ժողովրդի այն զավակներին, որ մեզ հետ ուխտի եկան և ծնկի իջան նահապակների աճյունի առջև:

«Յիշարակն արդարոց օրհնութեամբ եղիցի». ամեն:

Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա Կաթողիկոսն իր պարգամի մեջ շեշտեց Դեր Ջորի իմաստը ու արժեքը՝ հարկապես Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսության համար. «Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսութիւնը Անթիլիասում հաստատուելուց առաջ իր պար-

մական կայքէն ու փարածաշրջանէն աքսորական եղաւ Դեր Զորին մէջ, քայլեց Դեր Զորի աագներէն, սակայն ջմաց Դեր Զորի մէջ»: Վեհափառը նաև նշեց, որ այս ուխտագնացությունը դեպի Դեր Զոր երևակայություն չէ, այլ իրողություն, «իրողություն մը, որ ժողովրդի մը արդար դասին ու բռնաբարուած իրատուքներուն ձեռքբերման գրաականն է»:

Երգչախումբը կատարեց «Ս. Էջմիածին» և «Կիլիկիա» երգերը, որոնց հուզաթաթալ հնչյունների ներքո հավաքացյալներն սրացան Վեհափառ Հայրապետների օրհնությունները:

Անհրաժեշտ է նշել, որ ուխտագնացության առթիվ Ս. Նահապակաց մատուռի մեջ գերեզման փոփն մի հուշաքար՝ որպես գույգ Վեհափառների միասնական ուխտի առհավաքցա:

Վեհափառների գլխավորած ուխտավորների թափորը հեռանում է Դեր Զորից, հեռանում է՝ կարծես պարտքի մի ծանր զգացողությունից թեթևացած:

Դեր Զոր - Նալեպ խնդուց ոչ հեռու Եփրատի արծաթ գոյին է գալարվում միայլար ու անտաքեր: Հայոց Մայր գետը նահապակ հայերի հավաքական գերեզմանը և նրանց փանջալից վերջին վայրկյանների միակ համր վկան: Զգայացունց էր հանդիպումը Եփրատի հետ: Ուխտավորներն իջնում են գետափ, շարերը մտնում են ջուրը, ցողում երեսները, կանայք ծաղկեփնջեր են նետում գետը. գուցե Եփրատը դրանք սփռի նահապակների աճյունների վրա:

Կեսօրից հետո ուխտավորները վերադարձան Նալեպ: Իրադարձություններով ու միջոցառումներով լի այդ օրն ավարտվեց Յեղասպանության 86-րդ փարեդարձի ոգեկոչման արարողությամբ: Երեկոյան ժամը 21.00-ին գույգ Հայրապետներն ու նրանց ուղեկցող պատվիրակություններն ուղղվեցին Ս. Մարիամ Աստվածածին եկեղեցի: Մա 1983 թվականի մի նորակառույց է՝ ընդարձակ և հարմարավետ սրահով: Վերջին փարիներին միշտ այստեղ են կազմակերպվում Այրիկյան եղեռնին նվիրված համայնքային ոգեկոչման արարողությունները:

Եկեղեցին, նրա բակը և անգամ շրջակայքը լեվի-լեցուն են հավաքացյալների բազմություններով, շարերը ցանկանում էին գոնե հեռվից տեսնել Հայրապետներին, սրանալ նրանց օրհնությունը: Գեղարվեստական ճոխ հայտագրերից հետո Վեհափառ Հայրապետները հանդես եկան հայրապետական պարզամտերով: Արամ Ա Կաթողիկոսը, դիմելով ներկաներին, հորդորեց ջնոռանալ անցյալը և ունենալ մեր ազգային գաղափարախոսությունը. «Ազգերու գաղափարախոսությունը չի կրնար փոխափոխ: Պէտք է հաստատենք մեր ազգին հիմնահարցերը, առաջնահերթությունները: Անհմաստ է միայն մեր անցեալի արժեքներով հպարտանալը: Պէտք է բացուիք աշխարհին, որպեսզի այդ բոլորին մէջ կարողանանք յստակեցնել մեր ընելիքը: Ընելիքներով ժամանակ չ'անցընենք, այլ ընելիքներով: Տարբեր մօտեցումներ ունինք ու փարբերություններ, բայց անոնք պէտք չէ մեզ փանին հակասութեանց: Մարդարապարհի մարտի երդը կ'ըստ. «Երբ փան զանգը՝ ահագանգը, որ մեր հոգու պարտքը փանք»: Ահա՛ ժամը մեր հոգու պարտքը փալու: Վաղը ու՛շ կ'ըլլայ արդէն»:

Անդրադառնալով դերգորյան ուխտագնացությանը, Արամ Ա Կաթողիկոսը նշեց. «Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Երկրորդ Վեհափառին հետ միասին գնացինք Դեր Զոր, այնպեղ խունկ ծխեցինք, պարարագեցինք և հետ վերադարձանք: Ես Դեր Զորին մեջ ասացի՝ «Ուր որ գնանք, Դեր Զորը մեզի հետ պիտի փանինք: Դեր Զորը պիտի փանինք մեր եկեղեցիները, մեր դպրոցները, պիտի փանինք ամենուր, ուր հայու շունչ կայ»:

Իր հայրապետական պարզամտ մտայնությամբ Գարեգին Երկրորդը հորդորեց հավաքարմություն ցուցաբերել մեր նահապետների թողած կրակին. «Միեղի բարեպաշտ հայորդիք, սիրելի՛ հայեպահայեր. ուրախ ենք անչափ այս առիթի համար, որ պարզկամ է մեզ լինել Հալեպում, լինել ձեր մեջ, փեսնել ձեր պահվածքն ու կեցվածքը, ծանոթանալ ձեր խանդավառ ոգուն, նախանձախնդրությանը մեր ազգային սրբությունների, մեր ազգային արժեքների հանդեպ, ձեր սերը հայրենյաց հանդեպ, ձեր սերը Հայաստանյայց Ս. Եկեղեցու հանդեպ, ձեր սերը Մայր Աթոռ Ս. Էջմիածնի հանդեպ: Այս օրը՝ ապրիլի 24-ի Մեծ եղեռնի ողբերգությունը, փխրության, ընդվզումի զգացումով ծանրացել է ամենքիս հոգու վրա: Այնուհանդերձ, սիրելիներ, Հայրապետի սիրտն այսօր մխիթարված է և թեթևության զգացումով է համակված, որովհետև անկապար մի ուխտ իրականացրինք Հայաստանից ժամանած մեր պարվարժան հայորդիների հետ՝ գլխավորությամբ Հայաստանի Հանրապետության Սահմանադրական դատարանի նախագահ, փխր Գազիկ Հարությունյանի, ինչպես նաև մեր սիրեցյալ եղբայր, Մեծի Տանն Կիլիկիո Արամ Ա Վեհափառ Հայրապետի, մեր հոգևոր սպասավորների և եղբայրների հետ: Իրականացրինք մի անկապար ուխտ, որ իղձն ու ցանկությունն էր անցնող XX դարի լուսահոգի Հայոց Հայրապետների, անկապար մի ուխտ, որ իղձն ու երազանքն էր հայրենաբնակ մեր ժողովրդի, որովհետև անցած 86 փարիներին հնարավորություն չընձեռվեց, նրանք հնարավորություն չունեցան գալ Դեր Զոր՝ ծնրադրելու այդ սուրբ հողին, աղոթք բարձրացնելու առ Աստված, խնկարկելու նրանց անմահ հիշատակին: Ահա՛, Հայոց Հայրապետների օրհնությունն էմ բերել, ոչ միայն անցած դարի 132 Ամենայն Հայոց Հայրապետների օրհնությունը, այլև մեր ժողովրդի սերը: Հայրենիքի սերն ու օրհնությունը մեր հոգում ծրարած՝ ուխտի ենք եկել: Եկել ենք այդ օրհնությունը ծածկույթ դարձնելու Դեր Զորի անապարների վրա, որպեսզի այդ օրհնության ներքո նրանք հանգչեն խաղաղ ու հանգիստ, որպեսզի խաղաղվեն նրանց հոգիները՝ փեսնելով, որ իրենց երազները մարմին են առել և իրականություն են դարձել ի դեմս Ազատ, Անկախ Մայր Հայաստանի: Տեսնելով, որ այնպեղից այսօր Ամենայն Հայոց Հայրապետն է գալիս, որպեսզի իր օրհնությունները բերի անմեղ գոհերի հիշատակին, որ այնպեղից մշակույթի ու կրթության մշակներն են գալիս՝ իրենց սերը, իրենց հավաքարմությունը հավաստելու նրանց անավարտ երազներին:

Այսօր մենք, շնորհիվ քաջագուն մեր զավակների, վերստին կերտել ենք հայոց անկախ պետականությունը, ազատագրել ենք Արցախը, սակայն անավարտ է, ամբողջական չէ փակավին 1,5 միլիոն հայորդյաց երազը և փեսիլը՝ հանուն որի



ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԽՈՍՔ ԴԱՀԱՏԱԿԱՑ ՀԻՇԱՏԱԿԻՆ

նրանք ընկան, մարտիրոսացան, նահապակվեցին: Այդ երազը հզոր Հայրենիքի կերպումն է, այդ երազը բարեշնչն Հայրենիքի սրեղծումն է, այդ երազն այնպիսի Հայրենիքի սրեղծումն է, որտեղ հայտդիք կարողանան իրենց սրեղծագործ աշխատանքով ապրել խաղաղ ու անվտանգ: Ամենքս այսօր, սիրելիներ, մեր հոգու մեջ խորասուզված, փորձում ենք հաղորդ դառնալ մեր նահապակներին, փորձում ենք հասկանալ խորհուրդը մարտիրոսության, փորձում ենք լսել նրանց պատգամը, խորհուրդը մեծ: Յուրաքանչյուրիս հոգում այդ պատգամը, թեև փարբեր բառերով ու փարբեր նախադասություններով, մեկ արտահայտություն է գրնում այն մեր նահապակ հայտդիներից մեզ եկող պատգամն է՝ լինել հավատարիմ մեր հայրենյաց սրբազան ժառանգությանը, սիրել միմյանց, սիրով շաղախել մեր ազգի միասնությունը, սիրով ամրապնդել հիմքերը նորանկախ մեր պետականության: Ցավի ու տրտմության մեջ մարդ չի կարող սրեղծարար կյանքով ապրել: Ուրախությունը, բերկրանքը, սերը հոգում ծրարած անհասն է գորեղ, արի և ունակ հրաշագործելու: Հայոց հավաքի նվիրական կենտրոնից գալով այս պատգամն է, որ ուզում եմ փոխանցել ձեզ՝ ՄԵՐ ունենալ մեր հոգիներում, ՄԵՐ ունենալ մեր պարտության, ՄԵՐ ունենալ մեր ՀԱՅՐԵՆԻՔԻ նկատմամբ, որ այս օրերին մաքառում է, մաքառում է իր պետականության կերպման համար: Եվ այդ ՄԵՐԸ պեք է ամրապնդվի 24 ապրիլի խորհրդով, պիտի դառնա փեսիք, և ինչպես մեր սիրելի եղբայր Արամ Ա Կաթողիկոսն ասաց, պիտի դառնա կամք, պիտի դառնա մարտահրավեր, որպեսզի Հայոց աշխարհից հեռու վանվեն ցավ ու տրտմություն, արյուն և արցունք, որպեսզի հայոց մայրերը բերկրանքով, ցնծությամբ դիմավորեն փուն դարձող իրենց զավակներին, որպեսզի հայոց մայրերը հայոց նոր սերունդը կրթեն ու դաստիարակեն մերոսյան ոգով, վարդանանց ուխտով, Ավարայրի և Մարդարապարի արիությամբ և հավատով: Աստվածաշնչում կարդում ենք. «Ով իր զավակին է կրթում, նա նախանձն է շարժում թշնամու»: Մեր մաղթանքն է, մեր աղոթքն է, որպեսզի մենք կարողանանք 1700-ամյակը մի գեղեցիկ հոգևոր առիթ դարձնել և մեր զավակներին կրթել՝ կրթել հայրենական անանց արժեքները ներարկելով նրանց էության մեջ, նրանց անձերում:

Սիրելիներ. Մենք նվիրական այս եկեղեցու կամարների ներքո ուզում ենք աղոթք բարձրացնել առ Աստված՝ հայցելով, որ Տերն անսասան պահի ձեր հավատը, որ այնքան բուռն կերպով դրսևորվեց այս օրերին: Մեր աղոթքն է, որ Տերը խաղաղություն ցողի. Ամեն»:

Ուխտագնացության վերջին օրը ևս խիստ հագեցած էր փարբեր միջոցառումներով: Ծրագրի համաձայն, պարավիրակություններն այցելեցին Հալեպի հայկական երեք լավագույն ուսումնական հաստատություններ: Այսօր Հալեպի նահանգում գործում են Հայ Առաքելական համայնքին պարկանող 24 վարժարան (18 ամենօրյա և 6 կիրակնօրյա): Միայն Հալեպ քաղաքում գործում են ինը դպրոց, որոնցից հնագույնը 1876 թ. հիմնադրված Ազգային Ներսեսյան վարժարանն է: Քաղաքի հայկական դպրոցներում սովորող աշակերտների թիվը շուրջ 9,5 հազար է (մանկապարտեզի հետ միասին): Բացի այդ, հայ կաթողիկե համայնքն ունի հինգ վարժարան՝

4000 աշակերտով, իսկ ավերարանական համայնքն ունի հինգ կրթօջախ: Այսպիսով, միասին վերցրած, Հալեպի նահանգում այսօր գործում է 34 հայկական դպրոցական հաստատություն: Ուսուցումը կատարվում է Միրիայի Արաբական Հանրապետության պետական ուսումնական ծրագրերով՝ արաբերեն լեզվով: Պետության կողմից արդրված է շաբաթական չորս ժամ դասավանդել հայերեն լեզու և կրոն, որի ընթացքում ուսուցվում է նաև հայ ժողովրդի պատմություն (առանց թույլվաժողության): Դպրոցների գործադիր փոփոխությունները բոլորն էլ անխափիր արաբներ են (քրիստոնյա կամ մահմեդական) և նշանակվում են պետության կողմից: Քանի որ դպրոցները մասնավոր են, ապա դրանցում պաշտոնավարում են նաև սեփականատիրոջ ներկայացուցիչները, որոնց անվանում են «հայ փոփոխներ»: Ուսման համար աշակերտները վճարում են փարեկան 170 ամերիկյան դոլլար: Առանձին վճարվում են նաև փոխադրամիջոցների համար: Անվճարունակ աշակերտների ծախսերը հոգում է դպրոցի հոգաբարձությունը: Նկատելի է, որ Միրիայում հայ (ինչպես նաև այլ կրոնական ու ազգային փոքրամասնությունների) կուսակցությունների գործունեությունն արգելված է, ուստի նրանք գործում են մշակութային միությունների անվան ներքո: Իսկ դպրոցներն էլ, բնականաբար, գրվում են այս կամ այն մշակութային միության հովանավորության ներքո:

Պատվիրակությունները նախ այցելեցին Լազար Նաճարյան - Գալուստ Կյուլպենկյան կեդրոնական 12-ամյա վարժարան: Ուսումնական այս հաստատությունը հիմնադրվել է 1954 թվականին՝ ամերիկահայ հայրնի բարերար Լ. Նաճարյանի նվիրատվությամբ: Այն գործում է ՀԲԸ Միության հովանավորության ներքո: Ծննդաբան այժմ ունի 800 աշակերտ և ավելի քան 60 աշխատակից: .

Ամենայն հայոց Կաթողիկոսը բարձր գնահատեց դպրոցում կատարվող նվիրական աշխատանքը: Դիմելով աշակերտությանն ու ուսուցչական անձնակազմին՝ Վեհափառն ասաց. «Բարի, արդար և օրհնյալ առավոտ է բացվել յուրաքանչյուրիս համար: Փառք ենք բարձրացնում առ Աստված, որ Մենք ձեզ հետ ենք: Միրելի՛ սաներ, այսօր ձեզ համար հիշարժան և անսահման ուրախության օր է, քանզի հայոց Հայրապետներն են այցելել ձեզ: Միրելի՛ սաներ և ուսուցիչներ. Ամենայն հայոց Կաթողիկոսն ու Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսը սերն իրենց հոգու մեջ են եկել ձեզ մոտ: Օրհնյալ է առավոտը այս, օրհնյալ է այս հանդիպումը սաների հետ, սաներ, որոնք կրթվում ու հասակ են առնում հայաշունչ իրենց հոգում կրելով հայրենյաց փեսիքը: Հայոց Հայրապետներին ավելի մխիթարիչ քան դժվար է մատուցել, պարզել, քան ուսյալ, նախնյաց հավատքով գորեղ, հստակ նպատակներով աճող այս սերունդը: Ուզում եմ իմ գնահատանքն ու գեղեցկությունը, շնորհակալությունը հայրենել մեր սիրելի Մուրեն Սրբազանին, որ մատուցեց մեզ այս գեղեցիկ ընծան՝ հանդիպումը ձեզ հետ: Այս առիթով իմ գնահատական խոսքն եմ ուղղում ՀԲԸ Միությանը, որն իր առաքելությունն է դարձրել հայ մանուկների սերնդի դաստիարակության ու կրթության վեհ գործը ինչպես Սփյուռքում, այնպես էլ Մայր Հայրենիքում: Այսօր միայն

Մայր Հայրենիքում, մանկա-պատանեկան սրբեղծագործական կենտրոններում, 4000 պատանիներ են սովորում ՎԲԸ Միության շնորհիվ և աջակցությամբ:

Ես իմ գնահատանքի խոսքն եմ ուղղում մանկավարժներին, որոնք նվիրված են հայորդյաց կրթության նվիրական գործին, մանկավարժներին, որոնք ձեռքում է գրնվում մեր ժողովրդի ու Հայրենիքի վաղվա օրը, բայց նաև այսօրը, որովհետև այն ոգին, որ նրանք կերպում են ձեր մեջ, այն փեսքը, որ փայլս են ձեզ, դրանով է պայմանավորվելու մեր ազգի, մեր ժողովրդի վաղվա օրը՝ ինչպես Հայաստանում, այնպես էլ Սփյուռքում: Ես հպարտությամբ պիտի ասեմ, որ մանկավարժները բարձր նախանձախնդրությամբ են իրականացնում այդ գործը:

Միրելի՛ սաներ. դարձյալ կրկնում եմ, որ դուք ոչ միայն մեր ապագան եք, այլև այսօրը: Միայն պարզապես ուզում եմ ձեզ հիշեցնել մի պարագա: Դուք նստած եք այն նստարաններին, որպեղ նստած են եղել հայոց մեծերը՝ բոլորն անխտիր՝ սկսյալ Մեսրոպ Մաշտոցով, Վարդան Մամիկոնյանով, Նարեկացիով, Կոմիտասով, Անդրանիկ գորավարով և ավարտած մեր մյուս մեծերով:

Միրելի՛ սաներ. անունները, որ թվարկվեցին այսպեղ՝ Երևանի պետական համալսարանի ռեկտոր, Բժշկական համալսարանի ռեկտոր, Կոմիտասի անվան երաժշտական ռեկտոր և մյուսներ, այժմ նստած են այսպեղ, և դուք բախտավորությունն ունեք նրանց փեսնելու: Նրանց կերպարով այսպեղ քաջն Վարդանն է նստած, Անդրանիկ գորավարը, Նրանք Մաթևոսյանն է նստած: Նրանց միջոցով է ձեզ փոխանցվում Հայրենիքի սերն ու գորովը: Դուք պեք է կարողանաք նախանձախնդրորեն յուրացնել գիտելիքները, որ մատուցվում են ձեզ՝ ձեր մանկավարժների կողմից, որպեսզի դառնաք մեր ժողովրդի արժանավոր գավակներ:

Օրհնություն ձեզ»:

Մյուս ուսումնական հաստատությունը, որ այցելեցին պարավիրակությունները, Կիլիկյան ճեմարանն էր: Ուսումնական այս հաստատությունը հիմնադրվել է 1921 թվականին և գործում է ՄԴՆ կուսակցության հովանավորության ներքո: Ճեմարանը գրնվում է Հարթ-Միսի թաղամասում և փեղավորված է արդիական հարմարություններ ունեցող երկու շենքում: Ուսումնառությունը 12-ամյա է (երկրորդական): Սովորում է երկսեռ 620 աշակերտ: Շրջանավարտներն իրավունք ունեն ընդունվելու երկրի բարձրագույն ուսումնական հաստատություններ:

Աշակերտները նույն խանդավառությամբ և սրտի անհուն բերկրանքով ընդունեցին Հայրենիքից ժամանած պարավիրակներին: Բայց իրենց սեփական աչքերով փեսնելով Հայոց Հորը, որսպով նրա ժպիտն ու հայացքը՝ սաներն ապրեցին երջանկության անկրկնելի, աննկարագրելի պահեր: Անշուշտ, Ամենայն Հայոց Կաթողիկոսի այցելությունը կրթական հաստատություններ նոր լիցք ու թափ կհաղորդի հայապահպանության ուղղությամբ այսպեղ կատարվող աշխատանքներին: Միգուցե հենց այդ նկատառումով է, որ այցի կազմակերպիչներն աշխատել էին, որ Վեհափառը որքան կարող է, ավելի շատ հնարավորություն ունենա շփվելու, հաղորդակցվելու մտաղ սերնդի հետ:

էին նաև համայնքային կրթական, կրոնական, մշակութային կազմակերպությունների ներկայացուցիչները: Անհրաժեշտ է նշել, որ ուխտագնացության ամբողջ երեք օրերի ընթացքում ուխտավորների պատվիրակությունը միշտ զգաց Սիրիայում Նա-յասարանի դեսպան Լևոն Սարգսյանի և Նալեպոմ ՆՆ գլխավոր հյուպարոս Արեգ Նովհաննիսյանի հոգատարությունն ու պարաստակամությունը: Նույնպես նշելի է Բերիո թեմի առաջնորդ, Գերաշնորհ Ս. Սուրեն արքեպիսկոպոս Գաթարոյանի անձնական մեծ պարասխանավությունն ու ջանքերը, ինչպես նաև ազգային իշխանությունների հերևողական գործունեությունը՝ ուխտագնացությունը հավուր պարշաճի կազմակերպելու, պատվիրակությանը ընդունելու և ճանապարհելու ուղղությամբ: Այս բոլորի, ինչպես նաև ուխտագնացության ընդհանուր գնահատականին Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետն անդրադարձավ «Շողակայթ» հեռուստաստուդիայի թղթակցի հարցերին պարասխանելիս:

Ուխտագնացությունն ավարտված է: Այս ուխտագնացությամբ Ամենայն Հայոց Կաթողիկոսը հավաստեց, որ մենք ցեղասպանությանը զոհ գնացածների ժառանգներն ենք: Ներկաբար մենք նաև Կերն ենք նրանց Դատի և իրավունքների:

Ապրիլի 25-ի կեսգիշերին Ամենայն Հայոց Կաթողիկոսն ու Հայաստանի պատվիրակությունը վերադարձան Երևան:

- Վեհափառ Տեր, Ձեր ուխտն ի կարար:

ՊԵՏՐՈՍ Հ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ